

Ն Ի Ի — Ե Օ Ր Ք Ի Վ Ի Թ Խ Ա Ր Ի

Տ Ե Ե Ր Ը

Ամերիկացիք՝ քանի մը տարի է ի վեր իրենց գլխաւոր քաղաքներու՝ մանաւանդ Նիւ-Եորքի մէջ կը բարձրացընեն մեծօրի է բազմապարկ շէնքեր: Առաջ կը զարմանային լրեսիրով թէ 15 ական յարկ ունեցող տըներ կը շինէին. բայց այժմ Ի՛նչ նշանակութիւն ունին անոնք՝ այն Վիթխարի նորաշէն տներուն քով, որոնք Նիւ-Եորք քաղաքին ամէն կողմերէն վեր բարձրացած են և գրեթէ միուած՝ ամպերու մէջ:

Վերջերս, հոն, Նիւ-Եորքի մէջ՝ Բառք-Ռովի հարստարկին վրայ կանգնեցին տուն մը, որ իրաւամբ ուշագրաւ է. հրէշ տուն: Սա կը գերազանցէ մինչև ցարկ կառուցուած ամէն տներն: Հսկայական երեղոյժ մ'ունի և կարծես կիշխէ բովանդակ Նիւ-Եորքի վրայ: Իրեն որմնական բարձրութիւնը զոյգ մը աշտարակներով կ'աւարտի, ոսկեց կը ծածանին զօջակներ գեանէն 447 ոտք, կամ 149 մեզր բարձր օդոյ մէջ: Ասոր մեծղիութեան վրայ գողափար մը կազմելու համար, երևակայեցէք Փարիզու 6 յարկով տները՝ որոնք հազիւ 22 մեզր բարձրութիւն ունին: Պէտք է 7 անգամ աւելի բարձրացընել գանոնք Բառք-Ռովի տան հասարցընելու համար:

Հրէշ տունս 30 քն աւելի առանձին յարկեր ունի. ի հարկէ, կը հետևի որ, այս տեսակ մտքի յղացումներ՝ հիմն ի վեր պիտի տապալեն՝ ճարտարապետութեան հին գաղափարները: Չարդերը ամենայն մասամբ պիտի նուազըին, որովհետև շէնքերուն բարձրութեան պատճառաւ, անոնք անտեսանելի պիտի ըլլան, և զարձակ այժմ կը մտածուի շինել այն պիտի տներ, որոնք օգտակար ըլլան և կարելի եղածին չափ, պաշտօնէից բազմութիւն մը կեդրոնացընել անոնց մէջ, գործունեայ կեանքը ոգևորելու նպատակաւ: Հարկ չէ բա-

ցատրել որ այսպիսի շէնքերու մէջ վեր ելլելու և վար իջնելու համար, նորորինակ և արագընթաց մեքենաներ կը կատարեն սովորական սանդուխներու պաշտօնը:

Ըսինք որ Բառք Ռովի շէնքին ամբողջ բարձրութիւնը 447 ոտք էր, որով սա աշխարհիս ամենաբարձր տունն է. Նիւ-Եորք գտնուող բարձրագոյն շէնքերն հետեւեալք են:

|  |         |   |   |
|--|---------|---|---|
| Manhattan Life, 18 յարկ և 348 ոտք բարձր. |         |   |   |
| Saint-Paul, » 26 »                       | » 313 » | » | » |
| American Society 21 »                    | » 312 » | » | » |
| Commercial Cable, 20 »                   | » 304 » | » | » |
| Gilinder, » » 19 »                       | » 300 » | » | » |

Այժմ եթէ իբր եղբ բաղդատութեան անուին՝ Անապատի հրէշ՝ Եղիպտոսի բրգունքը՝ որ մարդկային աշխատութեամբ եղած շինուածոց մէջ ամենամեծօր յիշատակարան ներն են, կը տեսնենք որ Բառք Ռովի Վիթխարի տունը, անոնց մէջ 15 մեզր կարճ է: Յիբաւի սանց քով շոտ խեղճ շէնքեր են Վոլչինկոնի կապիտոլիոնը, Կրանդի դամբանը, World լրագրատունը, որոնք ժամանակաւ մեծ շոտաշ հանած էին, իրենց նորակերպութեանց և մեծղիութեանց համար:

Բառք Ռովի շէնքը իր վերջին գատիկունին մէջ պիտի ունենայ ճաշարան մը որոյ յատակը փողոցի բարայտաակէն 115 մեզր բարձրութեամբ պիտի ըլլայ: Երկու աշտարակներուն մէջ տեղի ալ խոհանոցի պիտի սեփականուի: Բովանդակութիւնը 12 միլիոն ֆրանք արժած է:

Չարմանանք և խնկանք ամերիկացեոց հանճարին վրայ, որուն շնորհիւ այս տան մէջ գրեթէ 25.000 հոգի կը բնակին: Եթէ այս շէնքս բաղդատենք՝ գերմանական Kaiser Wilhelm der Grosse նոր և վիթխարի նաւուն հետ, կը տեսնենք որ վերջինս 8.000 տակառաչափ պողպատ կը պարունակէ և 12.000 տակառաչափ այլ կայլ տեսակ առարկաներ. գլխաւորաբար ազիւ, շաղախ, կայլն, որոնցմով ամբողջ ծանրութիւնը 20.000 տակառաչափ է: Դարցեալ, 20.000 տակառաչափ ջուր տեղափոխելովը՝ գրեթէ ծանրութիւնը Բառք Ռովի տան ծանրութեան կը հասասարի: Սակայն

Kaiser Wilhelm 649 սոց ըլլալով (246 մեզր) շատ աւելի երկայն է վիթխարի սոււնն։ Իսկ գաղղիական Թրանզադլանդիկ ընկերութեան ամենամեծ շոգենաւին երկայնութիւնը 546 սոց կամ 172 մեզր է։ Բառք Իովի շէնքը 12 միլիոն արծած է բոննք, իսկ շոգենաւը 20 միլիոն։ Այս տարբերութեան պատճառներէն մին՝ շոգենաւի մեքենաներուն սուղ ըլլալն է, որ 27.000 ձիու ոյժ պէտք է ունենալ, մինչդեռ Նիւ Էօրքի հրէշ տան ելեկտրիկ և լուսաւորութեան համար 1.000 ձիու զօրութիւն՝ առաւելուն հանդերձ կը բաւէ, միւս կողմանէ, շաղախը և աղիւքը նուազ կ'արժէ քան զպողպատ։

Մինչև հիմայ ամենայն ինչ յաջող է, բայց կը մնայ լուծելիք կարևոր խնդիր մ'ալ, և շատ կարևոր։ Քանի մը ամիս առաջ այս վիթխարի տններէն մին կրակ առաւ։ Իսկոյն ջրհանկիրները հասան արկածալայրը։ Բայց զբարդգարաբ տեսան որ ջուրը մեքենայով հագիւ մինչև ութերորդ յարկը կը բարձրանար։ Պաշտօնեայք իրենց կրցած ճիւղը թափեցին, բայց աշխատութիւնն իսպարդիւն ըլլալով, Նիւստին հրամանատարը վճատելով, իրեն յուսահատ մարդկանց գոչեց. «Տղաք, ձգեցէք սր այրի։»

Եւ յիրաւի ասկէ զուրս ուրիշ բան չէին կրնար բնել։ Չայս տեսնելով, այժմ ամերիկեան ջրհանկիրներու տեսուչները կը պահանջեն որ բուկարկութեամբ օրէնք հաստատեն և արդելուն վիթխարի տնիւր շինելը։ Կանխիկը բնելու որ պիտի շէջողին, որովհետև Ամերիկացիք սաստիկ սիրահարուած են այս տեսակ նորութեանց, որոնք իրենց սեփական են։ Բայց ի՞նչ որ ալ ըլլայ, պէտք են մտածել հնարք մը, որով արդիւն իրենց հրէշային շէնքերը մոմերու պէս այրիլէ։

**ԲԻԻՐԱԿՆ** — Կը հիստարակէ բանասիրական, տեղագրական, ազգագրական, յօդուածներ։ Խմբ. Մ. Գառքեան. — Գինն է 12 ֆր. .

Հասցէ Direction du «Paraghn» Bahtché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.



**Ք Ա Ղ Ա Ք Ա Ա Ա Ա Ն Ա Մ Ի Ս**

20 Մ Ա Ր Տ



Ա Ն Գ Ղ Ի Ա

Անգղիացիք ի Սուտան. — Ներկայիս՝ Անգղիացիք ուրախալի կացութեան մէջ չեն գտնուիր՝ նկատմամբ Սուտանի։ Կարծեք էին թէ Սուտան ընդ միշտ տիրապետուած էր, թէ Խալիֆան փախեք էր անդառնալի կերպով, հետևաբար և Լնտարայի մէջ՝ սիրտար ֆիշընքը ընդունուած էր լատին ցեղի յատուկ խանդավառութեամբ և անգղիական վեհաձեռութեամբ մը, քանի մ'օրուան մէջ Եղիւր էր Լորտ, զուրս և միլիոնատեր։ Բայց ահա սոսկայի գոյմը. Խալիֆան զեռ ողջ և 18,000 զօրաց բանակով մը կը գաժնայ նորէն Անգղիացեաց վրայ, աւ նոյն իսկ կը ստիպէ թողուլ հեռանալ ընդհանուր Սպարապետին համանուն հղբայրը, որ նախ Գաւհիթէ և յետոյ կ'անցնի Լնտարա։ Տարակոյս չկայ որ նորէն պիտի յաղթեն անոր. բայց եթէ սոյն դէպքը պատահէր այն այլասերուած և շարակրատ լատիններուն, որպիսի ծիծաղ պիտի պատճառէր Անկլո — սաքսոններուն, որոնց միայն զուգէ ներսուած էր՝ Օմտուրմանի պատերազմին մէջ կատարել «ծայրագոյն անգլութիւններ, որ երբեք պատերազմի մը մէջ զօրծուած ըլլան»։ Ներկիք էր իրենց գերեզմանն հանել Մահադի դիակը, նետել անոր մարմինը գետի մէջ, և զուրքը զրկել ի զարթ Բիթտանական թանգարանին։ Առոնց զօրուար ազգերու կատակներ են, որոնց խորհրդարանն անգամ կը հաւանի։ Բայց կարծե՛ք թէ պատերազմը արդէն իսկ լնցած է, մինչդեռ նոր կը սկսի, կէն ճամբուն վրայ բուկարկել յաղթանակը... տիտք իրականութիւն, որ արծանաւոր չի թուիր բարձրագոյն ցեղերու. և սակայն ուսմ,